«ՍԱԹԵՆ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Դրոյի 23, բն. 20, հեռ. 28-18-59

«19» հունվարի 2009թ.

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ ԱԾ N 027 տրված ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի»

2008թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթի վերաբերյալ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամներին

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» հաշվապահական հաշվեկշիռը առ 1-ը հունվարի 2009թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականցնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի առ 1-ը հունվարի 2009թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման չափանիշներին համապատասխան:

«Սաթեն աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն,
Պատասխանատու
աուդիտոր՝ *Գ. Վարդանյան*